

ՍԻՓԱՆ ՔԱՀԱՆԱ ՄԽՍՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԹԻՎ

Անգամ մը ևս կգտնվինք Մեծ Պահոց շրջանին մեջ, որ մեկ կմղե ինքնաքննության, անձնական անդրադարձումներու և վգաստության:

Արդարև ճշմարիտ քրիստոնյայի մը կյանքը հարատև ինքնաքննման և սրբագրության ժամանակաշրջան մը պետք է ըլլա: Յուրաքանչյուրիս ներքնաշխարհը լեցված պետք է ըլլա սիրո, ներողամտության և բարեգործության անսպառ ոգիով:

Եթե իրապես անդրադառնանք, որ մեզի տրված կյանքը ամենեն մեծ պարգևն է Աստուծո կողմե, և թե մենք ստեղծված ենք իր պատկերին համաձայն և ունինք իր անմահական շունչեն մասնիկ մը, այն ատեն թե՛ մեր անձնական կյանքը և թե՛ ալ մեր ապրած այս աշխարհը կդառնա համերաշխության և դրախտային վայր մը:

Բայց ինչո՞ւ համար գոյություն ունի չարը, նախանձը, ատելությունը և մարդասպանությունը: Մարդ արարածը հաճախ իր մեջ կսպաննե Արարչին կողմե իրեն տրված բավմակողմանի շնորհները և ագահությամբ կուզե տիրանալ ուրիշներու ունեցածներուն: Իր այս չար նպատակը իրագործելու համար, ան կդիմե աներևակայելի խորամանկություններու և միջոցներու: Որոշ ժամանակ մը թեև կհաջողի և փառամոլությամբ և հպարտությամբ ինքզինք հաղթական կնկատե և կծիծաղի ուրիշներու խոնարհության և համեստության վրա, սակայն իր կատարած անիրավությունները կամաց-կամաց կսկսին ապդել իր հոգեկանին վրա և կսկսի սթափիլ իր քունեն, երբ կյանքի մեջ դժբախտություններ և հիվանդություններ կհաջորդեն իրար: Շատեր մեղքի տիղմին մեջ թաթխըված կբաժնվին այս աշխարհեն՝ առանց որևէ հետք անգամ թողելու իրենց փարթամ ու ճոխ գոյութենեն: Այսպիսիներ պատճառ կդառնան, որ ուրիշներ ալ կորսնցնեն իրենց հոգիները:

Սուրբ Գիրքը մեզի կսորվեցնե երախտապարտությամբ և եղբայրասիրությամբ ապրիլ և ըստ այնմ հարաբերիլ իրարու հետ: Ինչո՞ւ համար Աստուծո ստեղծած այս գեղեցիկ և առատ աշխարհին մեջ մարդիկ պատերազմներ մղեն, հակարավոր անմեղ մարդիկ անիմաստ տեղ վոհեն իրենց տրված կյանքը: Եթե ռազմատենչ կառավարությանց ղեկավարներ շարունակեն իրենց ներկա կործանարար ընթացքը, օր մը կրնա ամբողջ աշխարհը կործանիլ արդիական ռումբերու գործածությամբ:

Մեծ Պահքը հոգեկան ծաղկումի և վերածնունդի շրջան մը պետք է ըլլա բոլորիս համար: Կործանումը սատանայական մտքի ծնունդն է. իսկ մենք կանչված ենք ըլլալու պտղաբեր և մեր բարի գործերով ամրապընդելու սեր և խաղաղություն այս երկրագունդին վրա:

«Աստված սեր է» կըսե Քրիստոսի սիրելի Առաքյալը՝ Հովհաննես: Ուրեմն մենք ալ սիրո որդիներ ենք և մեր բոլոր գործերը պետք է կատարվին լույսի մեջ և ըլլան աստվածահաճո և ապգօգուտ: Աստված մարդասեր է և բարեմտոդրում: Ան չուզեր մարդուն մահը, այլ առիթ կու տա անոր, որ անդրադառնա իր գործած մեղքերուն վրա և

կղջումով ու ապաշխարությամբ վերագտնե իրեն համար սահմանված տեղը:

Հին Ուխտի մեջ կկարդանք, թե Նոյի ժամանակ մարդիկ կապրեին մեղքի մեջ: Այդ բոլոր մարդոց մեջեն Աստված իր սրտին մոտիկ, ճշմարիտ և արդար մարդը գտավ Նոյը և կայն իր ամբողջ գերդաստանով ապատեց ջրհեղեղեն: Նոյ միջոց դարձավ, որ մարդկային սերունդը շարունակվի աշխարհի մեջ:

Աստված կործանեց Սոդոմ և Գոմոր քաղաքները, երբ անոնց բնակիչները չարացան և չպահեցին Արարչին պատվիրանները: Իսկ Հովնան մարգարե Աստուծո գթության արժանացավ, երբ ան իրապես կղջաց իր մեղքին համար և իր քարոզչությամբ պատճառ դարձավ նինվեացիներու փրկության:

Քրիստոնեությունը իր ուսուցումներուն մեջ կշեշտե ծոմապահության և աղոթքին կարևորությունը՝ հոգիի փրկության համար: Քրիստոսե առաջ Սուրբ Հովհաննու Կարապետ փրկության համար նախապայման դրուավ մկրտությունն ու ապաշխարությունը: Իսկ մեր Տերը իր կյանքով ու խոսքով օրինակ հանդիսացավ բոլոր մարդոց: Ան քառասուն օր ծոմ պահեց և շեշտեց աղոթքին և ծոմապահության անհրաժեշտությունը: Սորված ենք, որ ծոմապահությունը մարմինը կտկարացնե և աղոթքը կկորացնե մեր հոգին՝ պայքարելու համար չարին ու մեղքին դեմ: Ապաշխարել կնշանակե անդրադառնալ գործված սխալի և մեղքի մը, անկեղծությամբ կղջալ, ողբալ, խոստովանիլ և որոշել անգամ մըն ալ չկրկնել նմանօրինակ մեղքեր:

Ապաշխարությունը Հայց. Եկեղեցվո յոթ խորհուրդներեն մին է: Բացի Մեծ Պահքեն ունինք շաբաթապահոց օրեր և շաբթվան չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ նվիրված ապաշխարության խորհուրդին: Հոգեգալըստյան օրը, երբ Պետրոս առաքյալ իր առաջին ատենաբանությամբ լուսավորեց ժողովուրդին միտքը Հոգեգալուստի նշանակության մասին, իր խոսքը փակեց ապաշխարությամբ թողության արժանանալու անհրաժեշտությունը շեշտելով:

Աղոթքը և ծոմապահությունը հավասարապես անհրաժեշտ են բժշկություն կատարելու համար: Օր մը երբ առաքյալներ չկրցան հիվանդ դիվահար մը բժշկել, հիվանդին տերը կայն Քրիստոսի առջև բերավ և մեր Տերը բուժեց զինք: Իսկ երբ առաքյալները հարցուցին Քրիստոսի, թե ի՞նչ էր պատճառը որ անոնք չէին կրցած կատարել այդ բժշկությունը, Քրիստոս պատասխանեց. «Այս տեսակ դևերը կելլեն միայն աղոթքով և ծոմապահությամբ:

Մեծ Պահոց առթիվ յուրաքանչյուրս գիտակցինք, թե դարերու ընթացքին Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը ինչ փոխանցած են մեզի և մենք ալ ջանանք փոխադարձաբար օգտակար հանդիսանալ Մայր Եկեղեցվո և հայ ազգին: Մաքրենք մեր մտքերը, հոգիները և մեր լեզուն, որպեսզի արդարացած սրտով կարենանք դիմավորել մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի հրաշափառ և կենսատու Ս. Հարության մեծ տոնը: